Արձանագրություն 3
« ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրական աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.01.2019թ. ժամը 14:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Գ.Գաբրիելյան – «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ
Անդամներ
Ն.Մաթևոսյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի բժիշկ-լաբորանտ
Մ. Սիմոնյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի ավագ քույր

Քարտուղար-գնումների համակարգող

Գ.Ամիրջանյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի տնտեսագետ

1. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման գործընթացում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.2 «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ գրաված մասնակիցների կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով, որ 90-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ գրաված «Լեյկո» ՍՊԸ-ն առաջարկել է ՌԴ արտադրության Աբակտերիլ նյութը, որը ընկերությունում որպես նախամանրէազերծող միջոց դեռևս չի օգտագործվել, որոշեց՝

«ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և պահանջել «Լեյկո» ՍՊԸ-ից մինչև կասեցման ավարտը ներկայացնելու ՀՀ ԱՆ հրամանը «Աբակտերիլ» ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգը հաստատելու մասին և ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգի հավելվածը, հաշվի առնելով, որ ստուգումների ընթացքում ստուգող մարմինների կողմից պահանջվում է նշված հրամանը և հավելվածը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2019թ. հունվարի 13-ին, ժամը 16:00-ին «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի շենքում, հասցեն՝ ք.Վեդի, Գայի 1 հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Գաբրիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ն. Մաթևոսյան

_____ Մ. Սիմոնյան

Քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան